

## ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՑՆԵՐԻ.

Առաքել թաղիշեցի, Յակոբ Նետտարենց  
Նաղաշ, Կարապետ վարդապետ Բաղիշեցի,  
Գրիգոր Ճերենց:

Զեռազիր Ա. իջ. Մատենադարանի Ն<sup>o</sup> 282.

ՏԱՐՈՆԱԿՈՒԹԻՒՆ Յ. ՂԵՐԵԶ:

(Երրուսակական եւ լիրէ):

ԹՈՒՂ.Թ. 45 — 47<sup>ր.</sup>

«Տաղ համօքէն մարտիրոսաց իտէր Ներսիսէ»:  
Սկիզբն — «Մը բուրգուսան անէն անէն՝ ու քուն +  
շուրջ անէն» 13 տուն. ապա կ տուն ևս կարմրա-  
գեղով սկսուած և «Նոյն է» վերտառութեամբ,  
նոյն վերտառութեամբ այլ ևս 7 տուն «Քուն»: 46 ա.  
Նոր Նոտրագրով լուսանցագրութիւն. «Այս տաղա-  
րանս Տէր Մեսրոպինն է»:

ԹՈՒՂ.Թ. 47<sup>ր.</sup> — 49<sup>ր.</sup>

«Տաղ համաւրէն ճգնաւորաց» Սկիզբն. — «Որ+  
դուրս անուն անուն» 8 տուն. Այլ ևս 5 տուն  
«Այլ տաղ» վերտառութեամբ. «Նոյն անունը +  
դուրս յէրիւսան անուն (Ն)ըստին»....

ԹՈՒՂ.Թ. 49.

Երկու տաղ Աստուածածնի. առաջինը 5 տնից  
և ամբողջ իսկ երկրորդի միայն սկսուածքը կայ.՝  
շարունակութիւնն ընկած է. Սկիզբն առաջին տաղի.  
«Աստուածածնին բուրգուսան առողջ անունու յեր-  
շէ քունը, մէր արարչն առաջ և առաջ. առաջնեւ իսո-  
ւիւնայշ»....

Երկրորդ տաղից երկու տող միայն կայ. «Խընդի-  
նաւուն նընդին է» պարունակութեան + ուղարկութեան....

ԹՈՒՂ.Թ. 50.

Տաղ ս. Յարգսի. սկիզբը թերի է .... բաշուն-  
չական հարաբեկ բաշարակ ու շահուն է հըսկուած-  
նութ և բաշուն յահանակ ու շահուն: 8 տուն.

ԹՈՒՂ.Թ. 51 — 53<sup>ր.</sup>

«Տաղ տապանակին. Սկիզբն. — Մայր հաստու-  
առողջ հարաբեկու և առաջաւութեան 5 տուն և ապա «յար-  
գորակ ազնիւ եկեղեցւոյ»: — «Տաղ լուսայ դուն որ-  
ուային, ուելին զնուան անուն քուն»: 17 տուն առա-  
ջին 11 տների սկզբնատառերը կազմում են. «Տէր ԱՌԱՔԵԼԻ է»:

ԹՈՒՂ.Թ. 53<sup>ր.</sup> — 56.

«Գէորգոյ զաւրավարին է տաղս». Սկիզբն. «...  
ու առաջ ընտրեցար բորի. շուրջ առաջնունեւ ուղա-  
րչէ»: 14 տուն. սկզբնագրերը կազմում են «ԱԿՈՒ-

ՆՊԻՍԿՈՊՈՍ. Երբէ յուրուրէ այս տաղին յաջորդումէ  
մի այլ տաղ 8 անից բաղկացած. «Տէր էմ քընուած և  
բուրգուսան բուրգութիւնով»:

ԹՈՒՂ.Թ. 56<sup>ր.</sup> — 62<sup>ր.</sup>

Երկու տաղ «ՅԱՌԱՔԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏԵՏԻ ԲԱ-  
ԿԱԾԵՑԻՑԻՈՒԹ» երկուսն էլ այրուբենական կարգով  
ու իրենց յորդորակներով. Առաջին տաղն սկսուում  
է. «Ամենայ քուն մարտ տուրտուն և ունացն. Ոսկուն  
շուրջ առաջ առաջ ու ունացն: Այս տաղի յորդորակը  
երգչի անձին է վերաբերում և նման է այն գիմա-  
գարձութիւններին, որ ցայսօր աշուղները կցում են  
իրենց երգի վերջին»:

Երկրորդ տաղն ևս այրուբենական է, բայց ա-  
ւելի կարճ աներով սկիզբն է. «Այսէն միւն է էն ու բի-  
ուս մէրայ և ուս. Արա յորդորակի սկզբնագրերը կազ-  
մում են. «ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՌԱՔԵԼԻ»:

ԹՈՒՂ.Թ. 62<sup>ր.</sup> — 65<sup>ր.</sup>

«Նախաշի ասացեալ», մի այրուբենական տաղ  
ա—ք, իրենց վերջարան մի տուն ևս կցած է երգիչը  
իւր անձի մասին: Տաղս սկսուումէ. «Անշանէ մէծ-  
նէն առ քուն + ուշաւուն. ունէն առ ունէն շնուռած դու-  
նուն: 65<sup>ր.</sup> լուսանցքում գրչափորձ»:

Թ. 65<sup>ր.</sup> — 67.

«Ողբապաշխարութեան, յինչ ձայն որ ասես կու-  
գայ. Սկսուածքն է. «Ես էմ իւրաքանչեալ ունէն, մարտէու է  
ունէն ունէն + ունէն: 18 տուն. Աւելի աշխարհա-  
բար քան թէ գրաբար լեզուով է գրուած. նման է  
նաղաշի երգերին. յաջորդական կարգին նայելով  
պէտք է նրանը լինի. թէպէտ ծանօթութիւն չը կայ  
այդ մասին»:

ԹՈՒՂ.Թ. 68 — 70.

«Տաղ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՂԱԾԵՑ-  
ԻՈՒԹ. Սկիզբն է. «Աստուած էմ յիստ քրիստու վնադնէ  
և վնադնէրու, յիս վնադնէրու հոգուն մէտեւ էմ մ-  
շտ լուրուն: 21 տուն. Ա—ն. Արան յաջորդում է  
կարճ աներով մի գանձ 11. տուն: «8ընծայ մատու-  
րուն: սկզբնատառութիւնով»:

Թ. 71. — 73<sup>ա.</sup>

Երկու տաղ գանձարանի մասին. 1) «Ե Ծերենց  
Գրիգոր վարդապետէ շինողի գանձուց»: 16 տող գո-  
վասանք գանձարանի, որ սկսուումէ. «Գովլու ունէ  
ունաւութեան» բառերով. Տողերի սկզբնատառերը կազ-  
մում են. «ԳՐԻԳՈՐԻ է Ե ԵՐԳԱ ԲԱՆԻ. 2) «Ե Տէր  
ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՂԱԾԵՑԵՑԻՈՒԹ. Սկիզ-  
բըն. «Ուն յայն անուն ունցը և բարուն. ունաւութեան ուն-  
ցըն համարուն: 13 տուն»:

Թ. 73—75<sup>o</sup>

«ՅՈՎՀԵԱՆԻՑԻՒ ԵՐԳ» . ինչպէս երեսում է աների գլխադրերից, սկիզբն է . «ՅԱՀԱՅԻՆ ԴԱՄԱՆԱԿԱՆ ՀԱՅՐԱԴԱՐ ԳՈՐԾՎԵԼ ՔԸՐԵԼԻ ԱՎԱՆՆԵԼ ԵՇԱԼԵՍ է խուճին և վրային շնորհած մակար այսօք է յարդառան է յանդույն ։ Նույն բարեկամական մեջ ընդունուած ուղարկութիւնները, առաջին ժամանակներից առաջ առաջ տեղուած են Սրբագրութիւնները և պատճենագիր առաջարկութիւնները և կազմում են վարմանալի խորհուրդ պայման մեծ յայտնեալ։ 9 տուն։

Թ. 75<sup>o</sup>—77<sup>o</sup>

Նոր զբանութիւնն ամփային թանաքով և նօտր զրով Պատուարագի աղօթքը ու ապա «երգ գիշերային պաշտաման»։

Թ. 78—79<sup>o</sup>

Խնամութեան աստիճանների մասին համառօտ և առանց վերնագրի ձանօթութիւնն երեսի վերջը շորս տող ձայնանիշներով գրուած է . «Աչէշան է լուս և այս և լուսուն է բայ բերեան շնորհած առաջարկութիւնների առաջ շահագոյն է բացից բայ»։

Թ. 80<sup>o</sup>

Գոհաք վարդից երկու տուն ձայնագրեալ։

Թ. 80<sup>o</sup>—81<sup>o</sup>

Երկրորդ ձեռք, բոլորդիր, Աստուածարտեան մեկնութիւններ չեն, աշունուած բառերի և ապա հաւատոյ մասանց թուռումը։

Թ. 82—83<sup>o</sup>

Վերնագիրը բոլորդիր. իսկ յանգիրը խառն նօպը և բոլորդիր, 1) «Աւ բշնութիւնն աղի» 2) «Աւ բնութիւնն վերաբկու զգեստից» վեղարի և փիլոնի։

Թ. 83<sup>o</sup>—89<sup>o</sup>

Երրորդ ձեռքով զրուած • մասամբ խաչոր բոլորդիր և մասամբ նօտրագիր անարուեստ և յետին ժամանակի տաղեր: 1) «Որի հշեք նշեանից նըշեանից հնդէն հնդէն հնդէն» . . . . . 2) «Յւրաքանչիւ երց ուրաքանչիւ, ընդ ուրաքանչիւ» . . . . . 3) «Խաչաւը հնեկը»: 4) «Տաշ գասաստանին» . . . . Այսքն միևնույն է ինչ . . . . . ու թ. մնացածը պատռուած է:

Թ. 86—90<sup>o</sup>

Ակիզը թերի է . մնացորդը միշնագարեան փիլիսոփայութեան մի հատուած է, որի հեղինակն է «Աւետիք Աւգուստին» քարոզողացն եղբայր կարգին, որ գրել է . . «Յամի ծննդագետան միրոյ Փրկչին ՌԱՅ ԵՅ և 2Ա թվականին (1380): Փետրվարի աւրն վերջին էր քառան և ինն ըստ նահանջին: Յորում առուր բանս յարգին ի ԱՆԾԸՆ եկեղեցին»:

Թ. 90—91<sup>o</sup>

«Յ Հարցմանց գրոց, թ. Հատորին. Դ. զԼուի» վասն վարդապետութեանց, ա—գ. Սրբն յաջորդում է «վասն բազում պատճառի արձակի կինն» մի հատուած ա—ժը, համարով երեսի նոյն տեղից քաղուած:

Թ. 91<sup>o</sup>—92<sup>o</sup>

Ժամանակագրութիւնն որ ամբողջովին յառաջ ենք թերում այստեղ՝ (Համմ Առաք Բաւ. պատմ.):

Վասն առաջին խանորաց որ նստեալ են ի թալլուէզ:

Երբ առաջին թաթմարն գուրս երեկի,

թիւն էր 0Հ.—[670 հայկ 1221 փրկէ]

Երբ	Անդու	զանն	երեկի	թիւն	2. էր.
Երբ	Արդուն	զանն	նստաւ	թիւն	29. էր.
Երբ	Հուլաւուն	նստաւ	թիւն		21. էր.
Երբ	Դուլին	փախեաւ	թիւն		2Ժ. էր.
Երբ	Ազաղէն	նստաւ	թիւն		2Ժ. էր.
Երբ	Բէրէնի	գուրսէրէր (sic!)	թիւն		2Ժ. էր.
Երբ	Արդունն	ծնաւ	թիւն		2Ժ. էր.
Երբ	Ահմագն	նստաւ			21.Ա. էր.
Երբ	Արդունն	նստաւ	թիւն		21.Գ. էր.
Երբ	Քեղաթուն	նստաւ	թիւն		21.Ե. էր.
Երբ	Բահատինն	նստաւ	թիւն		21.Ե. էր.
Երբ	Դաշանն	նստաւ	թիւն		21.Ե. էր.
Երբ	Դաշանն	նստաւ	թիւն		21.Ե. էր.
Երբ	Խարբանդէն	նստաւ	թիւն		21.Ե. էր.
Երբ	Բուտակինն	նստաւ	թիւն		21.Ե. էր.
Երբ	Ջիշասանն	նստաւ	թիւն		21.Գ. էր.
Երբ	Եղաղաթուն	նստաւ	թիւն		21.Զ. էր.
Երբ	Բուտակինն	նստաւ	թիւն		21.Զ. էր.

Եմիշասանն նստաւ թիւն . . . . . 21.Գ. էր.

Երբ Աշրաֆին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Երբ Աշակերտին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Երբ Աշակերտին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Երբ Աշակերտին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Երբ Աշակերտին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Երբ Աշակերտին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Երբ Աշակերտին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Երբ Աշակերտին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Երբ Աշակերտին նստաւ թիւն . . . . . 21.Զ. էր.

Թ. 92<sup>o</sup>—92<sup>o</sup>—128<sup>o</sup>

Պատարագի ամբողջ արարողութիւնը, զԼ. ա. Աւետիք արկանելոյ սպառք եկեղեցւոյ: Յորժամ կամացի քահանայն պատարագ մատուցանել: Պատուածիւն է պատուածիւն . . . . . բոլոր աշունդները, քարոզներն ու երերը յաջորդաբար գրուած են առանձին և կարմըրագեղով որոշուած վերնագիրների տակ: Նոյն-

պէս նշանակուած են քահանայի իւրաքանչիւր շարժողութիւններն ու գործողութիւնները, Ակրջին զլիի վերնագիրն է, «ՆՇ աղաթիք որ ասի նախքան զմաշակելն իսորհրդոյն ի բանից Թումայի առաքելոյն» Մորմին +\* պատճենական ...

Թ. 128<sup>ր</sup>—133<sup>ա</sup>.

Այս են նշանակութիւնք, ձեք և արարողութիւնք խօրհրդականն. ընթերցմունք և այլն մի ըստ միոցէ, Ակիզըն է.— ԶԼ +\* անունը իշտնէ ի բնեւն խն. իշտնէ ի բնեւն իշտնէ և ուսուու անունն: Կշնակի դառնաշնորհ լուսակայութեան, որ իշտնէ անունն: յանունն ուսուու անունն: ... Այս ձեռով սպասուի+ մեկնութիւն պատարագի արարողութիւն մի քանի մասերի: Համաձայն այս մեկնութեան եղանակին իւրաքանչիւր խնդիր միշտ մի քանի նշանակութիւններով է բացատրուած:

Թ. 133<sup>ր</sup>—134.

Առաջին երեսը գատարկ է, իսկ երկրորդ և երրորդ երեսում բացատրուած է ս. պատարագի եռութիւնը վերեսում յիշուած ձեռով: Երեսի վերինի շարանակութիւնն է, Ակիզըն, — Աւան լուրտութեան ներ ինչ է յէռութենէ խօրհրդոյս որ են հարկաւորը ...

Թ. 135—136<sup>ա</sup>.

Աեց զատ զատ և տնատեալ գրուած հատուած զանգան իրերի փոխակերպութեան մասին, որով կամինումէ ապացուցանել հացի մարմնի փոխակերպութել: Սրան կցուած է մի հատուած թէ ինչու քահանայական զգեստը բրդից պիտի լինի և ոչ կըտաւից:

Թ. 136—143<sup>ա</sup>.

Խոսովովանութեան ամբողջ կարգը. 1) Հրաժարիմ. 2) Հաւատամ. 3) Խոսովանիմ. 4) մեղայ. 5) Ողորմեցի:

Թ. 143<sup>ա</sup>.

ՅԻՇԱՏԱԿԱԲՐԱՆ. «Գրեցաւ խօրհրդութեան յաձախ բանիւք և լաւ յընտիր աւրինակէ. ձեռամբ յանարհեստ գրչի ՊՈՒԿԱԾ ԱԲԵՎԱԾԻ. ի թուին Ա. Հ. ( = 1076 = 1627. ) ի գոււն սուրբ յովհաննու մկրտչին, որ ԵՊ.Ը.Պ.Պ.Դ.Պ. վանը կոչի. ընդ հովանեաւ սուրբ աստուածածնին, և սրբոյն ստեփանոսի նախավկային. և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին. և այլ սրբոցս որ աստ կան հաւաքեալ յիշատակ ինձ և ծնաւղացն իմոց: Հոգեորացը և մարմնաւորացն: Եւ որբ հանդիպիք կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք ի մաքրափայլ ազօմս ձեր և գուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ աստուծոյ մերօյ. ամէն. հայր մեր որ»:

Եյս է ամբողջ յիշատակարանը, որ իսկապէս տաղարանին չէ վերաբերում, այլ պատարագ ամատուցինն է, որից առաջ է գրուած տաղարանը:

Թ. 143<sup>բ</sup>—148<sup>բ</sup>.

Քարոզներ և աղօթքներ. 1) «Միարան ամենեքեան գոհացարուք զմարդասէրէն աստուծոյ». 2) «Ար ի քրովիքական և յանպատում հանգուցեալ ես յաթու». 3) «Արթուն մտօք». 4) «Զգեցն մեզ տէր աստուած մեր զէն արդարութեան», 5) «Սուրբ սրտիւ և հաստատուն հաւատով». 6) «Տէր զօրութեանց, որ կամաւոր մահուամբ քո», Սրանց յաջորդումէ մանր նօտրագրով մի ծանօթութիւն Փրկչի մասին. «Զէտէլէ [ = զէտէլէ է ] զէ ուրիշուսի արքինն է. ժամ եկաց է բերելունէ. և հոգին 1.9. ժամ և իւս յամեց է ուժեւն»...

Թ. 148<sup>բ</sup>—150.

Զանազան ծանօթութիւններ. 1) Լուսոյ ըստեղծման մասին. 2) Լուսնի տարին և խաւարումն. 3) «աւուրբ պահպանութեան որ չէ պարտ գործել». 4) «թէ կամիցիս որ զհաց շատ պահես. նա առ զշամնի յերթու. և ընդ ծեփն խառնէ. և զհորն ծեփէ. և թէ աման ինչ և իցէ». 5) «Յուրդանէն [ է Պահանէն ] իւսանիւնն յամենասուբ էրբորութեան. Արու, հայր, իպն օրգի: Ըստահ, հոգի: ... մի քանի արարերէն բառերի մեկնութիւն: 6) «Վիճակ սուրբ առաքելոցն: «է իշլէ չիրէն յունէ է Պէտրու»...

## Թ. 151.

«Յաղագս ցուցանելոյ գաւառաց». — Դուրսանեաց [ Դուրսանելոց ] իւսանան, կումիւ: Ավուլոց, Երշունին: Մաստարշին: և ավան: Աղյուն: [ Աղյունոց ]:

Այս օրինակ աշխարհագրական հին անունների դիմաց նոր անուններով բացատրութիւններ, որոնց մէջ մօտաւոր և սիսաւ մեկնութիւններն շատ կան:

Թ. 151<sup>բ</sup>—152<sup>բ</sup>.

«Կանոն հանդերձ օրհնելոյ.. և մի աղօթք և Հոգի քրիստոսի սրբեալ զիս»:

Թ. 153—154<sup>բ</sup>.

Օրինակ ժողովարարութեան նամակի, որ տալիս էին եպիսկոպոսներն ու կաթուղիկոսունք այն անձանց, որոնք պատերազմների ժամանակ աղքատանումէին և որոնց հարազատներին գերի էին տանում: Գերիներին ազատելու համար այդպիսիք թուղթ էին առնում հոգեոր առաջնորդներից և շրջում հայ հասարակութեան մէջ ժողովարարութիւն անելու. ահա այս նամակի օրինակը մի ընդհանուր ձև է այդպիսի թղթերի: Զեռագրիս տէրն

անշուշտ հոգեսր մի այնպիսի պաշտօնեայ է եղել,  
որին այդպիսի թղթի օրինակը կարեսր էր:

Թ. 154<sup>ր</sup>.

Նրբորդ տողում: «Օրհնեալ», ապա ոռւսերէն  
մի այլ ձեռքով գրուած է Սլովա Պիչեր: Լուսանցք-  
ներում և երեսի վերայ գրչափորձութիւններ:  
Դ տող երկրորդ յիշատակարան: «Փառք ամենասուրբ  
երրորդութեան հաւը և որդույ և հոգոյն սրբոյ:  
Ես ՊԱՊԵՅ, առայ զգիրկս յիշատակ ինձ և ծնողացն  
իմց հայրն իմ: Փիրղուլին և մայրն իմ Աւարդիսա-  
թունն: և կողակիցն իմ Խուլին (Խալին) գուարչն  
և օրդիրն իմ Տէր գա:» ապա Դ տող գատարկ տեղ:

Թ. 155.

Նոր ձեռքով: 1) Գիր անելու խրատ: 2) ան-  
վարժ ու անդրագէտ ձեռքով մի քանի գեղատում:

Թ. 156<sup>ր</sup>.

1) Պալղամի գեղատում: 2) Այս է իսամ թաւա-  
ճի կատար:—«Գարին այրէ և սղկէ և շարով մաղէ:  
Նոյն չափովն ըրինձ այրէ և շարով մաղէ. Նոյն չա-  
փովն նաւթի մուր յիրար խառնէ և լից ի կոտոշ մի:  
և ջուր լից վրայ և սարեկէ և բ. աւր հար: մինչ որ  
ծոր գառնայ և գրէ:» 2) Երկու գեղատում: Աւտըլ  
Դարայից: 3) Գրչափորձ:

\* \*

Տաղարանիս մէջ յիշուած երգիշների տաղերից օրինակներ:

### 1. ՆԵՑՏԱՐԵՆՅՑ ՅԱԿՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ.

Տաղ Ուսուբ Խուլի (թ. 33<sup>ր</sup>—34).

Սքանչելին սուրբ Նըշանըդ պատուեալ  
Եւ փառաւք անմաշին զարդարեալ.  
Զչար այսոց զաւրութիւնս խորտակեալ  
Եւ ըղցաւըս մարդկան փարատեալ:

Զքեղ ունիմք բարեխաւս աշխարհի:  
Փայտ կենաց և նըշան պատուելի.  
Սուրբ գառինըն զենմանըն տեղի:  
Հրաշագործ սուրբ Նըշան սոսկալի:

Դու Նըման պատուական մարդարտի:

Պայծառ ակն ու մաքուր հայելի:

Գյոն կարմիր և բեհեղ ծիրանի:

Կինամոն և բուրչառ խընկալի:

Երուսակըն ծագեալ յաշխարհի:  
Գաւազան զաւրութեան Մովսէսի:  
Տունկ անմահ ի դրախտէն աղենի:  
Լեր գու միշտ ծառայիցս հովանի:

Մեղուցեալքս անկանիմք առաջի:

Երկրպագեալքս սուրբ խաչիդ պանծալի:

1. Այս ծեւով երկարի (՝ նշան ունին բոլոր տողա-  
զերը վանկերը:

Աւգնական լեր ծերի և տղայի:

Եւ առ քեզ հաւատով գիմողի:

Սքանչելագործ սուրբ Նըշան յաղթութեան:

Դէմ գիւացըն գընտին ախոյեան:

Դու միշտ լեր և նոցա պահապան:

Որք յուսով հաւատով առ քեզ գան:

Զժողովուրդը պահեալ (.) անսասան:

Զքահանայքս զաւրացո (.) անխափան:

Տու սոսա (.) ըզհոգի գիտութեան:

Զի անփորձ մնացեն յաւիտեան:

Որք ի տաւնըս քո սուրբ հաղորդին:

Պահպանեամ զաւրութեամբդ ըզնոսին:

Եայսըլհետէ մինչ յաւըլն վերջին:

Անիմաստ և տըգէտ երգողի:

ՆԵՑՏԱՐԵՆՅՑ սուտանուն ՅԱԿՈՒ:

Իմ եղրաւը Պաղպարին խընդրողի:

Հաւասար ասացէք ողորմի:

Ով մանկունք սըրբասէրք Այսոնի:

Որք երգէտ ըզբաներս ի կարդի:

Զեղկելիս յիշեցէք ի բարի:

Իմ եղրայրը և որդիք պանծալի: (')

### 2. ՏԵՂ ՅԱԿՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ: ԲԱԴԻՇԵՑԻՈՅԵՏ:

(Թ. 56<sup>ր</sup>—60):

Ամենայն փառք մարդոց դարտակ և ունայն:  
սողումն զայս առէ շնորհաւք տիրական:

Բոլորից թէ լինիս գու տէր և իշխան:

Բայց յետոյ ի հող մըտանես զընտան:

մի մընար, մի մընար անդարձ ի մեղաց:

մի մատներ, մի մատներ զհոգիդ տանջանաց:

Գարըշելի ժահահոտ մեղաւք մի խարիր.

գողն յերակ քեղ սպասէ զայն լաւ իմացիր:

Դաղարեալ (.) ի մեղաց բարեաց հետեկիր.

գուռն բացի սըրտիդ և խոստովանիր:

Մի մընար ...

Եթէ յայսմ աշխարհիս մեղօք մոլորիս.

Եղկելի յաւը մահուն դու փոշի մանիս:

Զերդ զերազ գիշերոյ՝ դու յանցաւորին.

Զարթնուցուս դու յետոյ ոչ հասանիս: մի...

Է՛ յիմար և անգէտ որ զայս չիմանայ:

որ անդարձն է մեղաց գիւացն է ծառայ:

1. Ձեռագրի Նկարագրութեան մէջ, «Արարտ» թ. 5  
երես 91 ս. 2. այս վերջին տունս սիսամարդ գոշի յաւել-  
ուած է կոչուած, փոխսանակ իններորդ տան հնտ միսանին  
հնդիսակի յիշատակարան անուանուելու:

2. յերակ=Երագ:

Ըմբռանեալ է տոռամբ ըդնա սատանայ.  
որ չլողու աստուծոյ բարին քանաց.  
Թէ չունիս մարդ բարի որ զքեզ նըրատէ.  
զաւր մահուն դու յիշէ և այնով ճանաչէ.  
ժամանակ մի ծաղկի նըման կու փայլէ.  
բայց յետոյ լալագին ի հող մըտանէ.  
Ի թաղել մեռելին ճարակ քեզ արա (J).  
երբ նորա (J) աւրն եհաս, քեզ այլ պիտի զայ.  
Լաւ մըտաւքը հայեաց ի մարմնոյդ վերայ.  
որ այսաւր կենդանի վաղն ի հող դառնայ.  
Խափանի յաւր մահուն ի որունորդ ամենայն.  
զինչ խորհիս և կարծես զայն քեզ մնացական.  
Ծածկեցաւ փառքն ամեն և առ քեզ վախճան.  
զի գնայ մարդն ի տունըն յաւիտենական.  
Կոշնականն երբ դայցէ՝ հոգւոյն յաւանդման՝  
նա չի տայ այլ համբեր՝ մարդոյն հրաւիրման.  
Հառաջմամբ ակնարկէ յազգերն ամենայն.  
ի նոցունց բաժանի խիստ ողորմական: մի...  
Զեռնտու ոչ լինի ով ոք մեռելին.  
ոչ լինի աւգնական ի ժամն ահագին:  
Գողելով փախիցէ յահէ հրեշտակին.  
ոչ կարէ ազատիլ ի ժամն ահագին: մի...  
Ճըշմարիտ մեղաւոր մարդոյ մահն է չար.  
որ ի յայսմ աշխարհիս չարար իւրըն ճար:  
Մահն եկեալ ըմբռանէ զնա յանկարծարար.  
զերդ ըզգող գիշերոյ անտես ծածկաբար: մի...  
Յերկնային ճանապարհն առեալ զնա տանին.  
դեքըն գան ընդ հոգւոյն այն պա(+)երազմին:  
Նա մընայ եղկելի մեղաւոր հոգին.  
զոր տեսեալ Անտոն սուրբ ճըշնաւորին: մի...  
Շահ չը կայ յաշխարհիս ով ոք դատեցի.  
բայց միայն թէ բարի գործոց հետևէ:  
Ով եղբայր ջանք արա (J) և գործէ բարի.  
մինչ ունիս ժամանակ ի յայսմ աշխարհիս: մի...  
Զողորմի հայն որդուց յօր դատաստանին.  
քեզ վրկայ մեծատանն և Երրահամին.  
Պապակէր մեծատունն ի հուր գեհենին.  
կարաւտէր ծագ մատին աղքատ Պապարին: մի...  
Ճանք արա (J) աղաւթից. մինչ կաս կենդանի.  
որ յանշէջ գեհենոյն հոգիդ ազատի:  
Ռատ բաշխեա՛ քաղցելոց ի գում սեղանի,  
զի առցես փոխարէն ձեռամբ Յիսուսի:  
Սարսափին յարարչէն գործողքըն չարեաց.  
դողալով մատնեսցին հըրոյն տանջանաց.  
Այս գոչեն խառնելով ընդ անքուն որդանց.  
Ժանձրամած խաւարաւ ընդ սառնամանեաց:

Տեսութեամբ քրիստոսի արդարքըն ամենայն.  
ցընծութեամբ բերկրանաւք յերկինս վերանան.  
Ի ամկական զըւարթնոց լինին համաձայն.  
եւ աւրհնեն զտէր աստուած յաւիտենական.  
Յանկալի սեղանոյն կենաց հաղորդին.  
յագենան յերկել փառաց արարչին.  
Ի իւսեսցին միութեամբ սիրով անմահին.  
հարսնացեալքըն մաքուր անմահ փեսային.  
Փառք երգեն աստուծոյ մըշտընքենաւոր.  
յարազըւարթ խընդութեամբ փառաւքն երկնաւոր.  
Քեզ լիցի այս էւրոպ ով մարդ բանաւոր.  
որ զըղջանաս և լինիս տեառն արժանաւոր:  
Յ օ ր դ ո ր ա կ.  
Անիմաստ ԱՌԱՔԵԼ ճարակ քեզ արա (J).  
Ռահ կենաց ի յերկինս քեզ առաջնորդեա (J).  
Աստուծոյ խնամողին զքեզ յանձին արա (J).  
Քանզի նա հայրաբար վասն քո հոգայ:  
Երկընչիր ի մեղաց, դարձիր և զըղջա (J).  
Լալագին հառաջմամբ զաստուած աղաջեա (J).  
Ի շիթանցդ աւրհնութենէ պըտուղ ընծայեա (J).  
Եղելոց ստեղծողին որ կայ և մնայ.  

---

3. ՆԱԽԱԾԻ ԱՍՏԵԽԱՆ. (Թ. 62<sup>o</sup> — 65<sup>o</sup>):  
Անցանէ մեծութիւն ու փառք աշխարհի.  
աւերի ու քակտի շինուած տաճարին:  
Բայց գու զայս գիտացիր թէ յինչ կու դատին.  
երբ թողուս աւտարաց ւի հող մըտանին:  
մի դատիր, այ նաղաշ, իզուր մի դատիր.  
մի խարիր մեղօք, մի խարիր:  
Գիտացիր՝ գիտացիր քեզ աւր կայ մահու.  
գերեզման գու շինէ քեզ տուն զընալու.  
Գու չունիս քեզ քաղաք աստէն մընալու.  
գու վասն էր դադարիս զաշերդ իլալու.  
Երբ չունիս գու ճարակ աստէն կենալու.  
գու արա (J) քեզ շուտով թագրիր գընալու.  
Զինչ ունիս յաստենիս փոխ տուր աստուծոց.  
զինահար, զինահար անդ ես գընալու: մի...  
Է՞ր դատիս եղկելի հետ անցաւորին.  
Երբ յետոյ փոշիման տըրտում տի լինիս.  
Ընդ հոգոյդ միացիր և գործէ բարին.  
ընտրելոց հետեիր զի սուրբ լինիցիս: մի...  
Թէ կամիս աստուծոյ լինել սիրելի.  
թող ըզէր աշխարհիս և գործէ բարի.  
Ժամանակս է խարող քեզ չառնէ բարի.  
ժամանակ մի քաղցը և յետոյ խիստ գառնալեզի: մի...  
Ի՞նչ շահ է քեզ իւրնդալ ի յայսմ աշխարհին.  
Երբ յետոյ մեռանիս ւի հող մտանիս.

Հաց լալով եղիկելի թէ խելք ունիցիս,  
Հաց ւյիշէ զի վաղին ի հող լուծանիս, մի ...  
Խարեցար յաստենէս քեզ էն վրկայ է.  
Խոցեցար չար նետիւ ի սատանայ է:  
Ծիծաղել վայրապար քեզ ի՞նչ վայել է.  
Երբ վա(յ)դիւն արտասուք ու լաց ժամանէ՛ մի ...  
Կենաց գիր գու չունիս անմահ մընալու.  
Եռ առեալ ես պատգամ աստէն կենալու.  
Հեր եկիր յաշխարհիս ւայլ ևս գընալու.  
Հանց ջանա(յ) որ չը լինիս գու բաժին հըրոյ՝ մի ...  
Զայն փըրկչին քարոզէ կենալ քեզ արթուն.  
Եղիկելի վասն է՛ր կաս անհօփի քո՞ն.  
Վեհավար նաւաբեկ ի մէջն ի ծովուն.  
ալեկոծիս մեղաւք զինչ նաւն ի քամուն: մի ...  
Ճանապարհ հեռաւոր ունիս գընալու.  
Ճար չունիս, ճար չունիս փըրկել ի մահու.  
Մի առներ գու խափան զաշերդ ի լալու:  
զմիտքը արթուն կալ քըննէ թուր ես գընալու: մի ...  
Յորժամ մահ քեզ տիրէ՝ ւարըն հասանի.  
Եւ հոգիդ ի մարմնոյդ ելեալ բաժանի.  
Նա հայիս աստ և անդ ողօրմ ու լալի.  
ոչ աւգնէ քեզ եղբայր և ոչ սիրելի՝ մի ...  
Շուրջ ածես ողորմիկ զաշերդ ու նայիս.  
Հետ թափես արտասուք ու հետ շխարիս:  
Ոչ աւգնէ մեծութիւն ոչ սէր աշխարհիս.  
զինչ բարի գործեցիր նա զայն տի տանիս: մի ...  
Զամաշես թէ վասն էր իզուր կու գատիս.  
ով հասաւ մուրատի որ գուն հասանիս:  
Պարծենաս ու պահու մի թագպիր գու չունիս.  
ով շահաւ յաստենէս օր գու տի շահիս: մի ...  
Ճանք արա(յ) ալզաթից ւարթուն կենալու.  
բաց զհոգոյ աչքդ ու տես թէ ի՞նչ կայ գալու.  
Բայի ու թագիր արա(յ) գընալու.  
Գիտացիր գիտացիր որ չես մընալու: մի ...  
Սուս ու փուտ մեծութիւնդ ու փառքդ անցանէ.  
այ ՆԱԽԱԾ մի խարիր խելքը ժողովէ՛  
Վարդապետ ձեւանաս զգործըն կատարէ՛.  
վայ անձինդ երբ դատողն յատեան տի կոչէ՛: մի ...  
Տէր կոչիս, տուր համար գործոյն տիրական.  
տես թէ քանի արեան ես գու պարտական.  
Դարունի անուանիս վարուք ռամկական.  
վայ աւուրն որ համար տաս տընտեսութեան: մի ...  
Ցաւք հոգւցիդ գու կըրակ վասն է՛ր յաւելն.  
ագահիս ու մեղաց պըտուղ ժողովէ՛  
և հին դաֆթարէ մեղաց գու նոր կու նորին.  
զինչ առնուս յաւարաց պիտիր վճարես:  
Փոխանակ որ առեր զիեղտ աշխարհիս.

զի՞նչ բարի գործեցեր նա զայն տի տանիս:  
Քահանայ ես քաւիչ վասն այն մեծարիս.  
անքաւել մեղանէս վասն այն կորընչիս.  
Այ նաղաշ դու լրսէ զինչ որ քարողես.  
ի՞նչ շահ է քեզ ասելդ երբ ու կատարես.  
Որչափ շատ մեծութիւն ու մայ ժողովես.  
նա թողուս աւտարաց ւի հող մըտանիս:

\* \*

Թէ հին և թէ նոր հայ ժողովրդական երգիչներին յատուկ է բարոյական խրատը կոմ քարողը, որովհետեւ այդ երգիչներն իրենց չեն համարել և չեն համարում միայն ժողովրդին զուարձայնող և կամ նրա ցաւերի թարգման, այլ առաջնորդ և քարողիչ բարոյականութեան քարոզիչ է ինչպէս հին ժամանակը, իսկ նորագոյն աշուղը մինչև իսկ լուսաւորութեան քարոզիչ է. մեր նոր աշուղների երգերը լրսող շատ անգամ կարծումէ, թէ լրագիրների ու լուսութեան յօդուածներ է կարգում (Զիվանի, Կարինի և լն), Հին երգիչների ամենասիրելի թէրու է եղել աշխարհիս ունայնութիւնը և հաճոյքի խրուսիկ լինելը, ուստի և քիչ հայ երգիչ կայ, որ այդ մասին երգած չը լինի: Վերմում յառաջ բերուած երկու օրինակները նցյն նիւթի մասին են, միայն թէ վերջինս աւելի ռամկական, այսինքն աշխարհիկ ու ծով է և աւելի աւիւնով քան թէ առաջինը, ընացելով որ տաղաչափութեան կաշկանդիչ հնարները նաղաշի երգի մէջ աւելի է:

Նոյն այս ձեռվ և բովանդակութեամբ է և Կարապետ վարդապետ Բաղիշեցու ոտանաւորը թ. 68<sup>o</sup> —70<sup>o</sup> որ զանց ենք անում յառաջ բերելու:

\* \*

Գանձարանի գործադրութեան և զանձերի երգեցողութեան մասին երկու ոտանաւոր կայ ձեռագիրս մէջ, որ յառաջ ենք բերում այս տեղ որովհետեւ հետաքրքրական են թէ իրենց ձեռվ և թէ բովանդակութեամբ: (Տես թ. 71—73<sup>o</sup>).

### Յ. Կ ԾԵՐԵՆՑ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԻԿԱԳԵՏԻ

Ն Ի Ն Օ Պ Ի Գ Ա Ն Ճ Ո Ւ Յ Ա

Գովեմք ըզքեզ ով գանձարան.  
Բամեալ բանիւ մերբողական.  
Եմասաւութեան ըշտեմարան.  
Գումար գանձուցըս պատուական.  
Որովհընծան և զըւարձանան:

Բամելալ մանկունք ուսումնական։  
Ի գիտութեանց քոց լիանան։  
Եկեղեցիք փարթամանան։  
Երգել ըզփառս տեառն յաւիտեան։  
Բոտեալ հայցմամբ աղաւթական։  
Գոհութիւնս աստուծոյ տան։  
Սիրով որբուիւ ուրախանան։  
Բանիքս ճոխ շարադրական։  
Ամենագով ազնըւական։  
Նըւադ ձայնիւ փառատրական։  
Ի մարդկայնոցս վերանան։

## Կ. Ի ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԴՊԵՏԻ ԲԱՂԻՇԵՑԻՈՅ

Թէ ձայն ունիս քաղցը և բարակ։  
զգանձերս ասա(յ) գու համարձակ։  
ապա թէ հաստ է և խառնակ։  
յայսկից ի զատ կացիր յէր-է։  
Զի այս նորա է ախորժակ  
այնմ որուն ի քաղցը եղանակ։  
եւ ընդ ձայնին ի բանն արագ։  
որով հեքիցն առնէ ձարակ։

Թէ յընթեռնուլըն չէ արագ։  
երդըն լինի անցեալ ճըրագ։  
յայն ժամ ժողովն առ հասարակ։  
ծիծաղելով առնեն կատակ։  
Այլ բանն և ձայնն առհասարակ։  
երգոյս պիտի խիստ աւժանուակ։  
որպէս զեղինս միմեանց համակ։  
լլծեալ վարեն յերկուս կընճակ։  
Որով զակաւս բանին շխտակ  
ի գլուխ տանեն անխոտորնակ։  
եւ կամ թըրջնոց գոլ նմանակ։  
երկու թևօք թըր(ա)չեն յէր-է։

Այսպէս և գու ով ժիր մըշակ  
եթէ ունիս զերկուսն յըստակ։  
երգեա(յ) վլստահ անփաթերակ։  
եւ ըզդըծաւղս յիշեա(յ) յէր-է։  
շմբուրոս ուսան ուշուա։  
ու է՛ երշէ յոշ աղուշուա։

Ա՛վ սիրելի եղբայր որ ես։  
զայս քեղ ինըրաս տամ որ լլսես։  
յորժամ որ զանձգ եղանակես։  
զթուխմթըն թըրքով չապականես։  
Եւ անողորմ յետ չի պարզես։  
Հանց որ կապին լընաս գործես  
կամ թէ յանգէտ ձեռն արկանես։  
խողամարդից կոխան շինես։

Զոր գանձ կամիս որ դու ասես։  
զցանկ ի համարան յառաջքըն տե՛ս,  
տըգիտութեամբ չի չարչարես,  
այլ համարովըն գըտանես։

Յորժամ որ գաս ըզ գանձն ասես։  
զգրոց լուսանցըս չաղտոտես։  
եւ կամ թանաս զմատդ ու շրջես։  
եւ զիմ գիեւալս ապա խառնես։  
Այլ յոյժ սիրով նախախնամես  
ոըրբեալ ձեռաւք լաթով ըըռնես։  
ի հրոյ և ի ջրոյ ի զատ պահես  
ապա(յ) զաստուած գու տեսանես։  
Երկու երեք շորով պահես։  
վի չորային տեղիս գընես։  
վի պատշաճի աւրն որ գիտես։  
ապա(յ) ըերեալ եղանակես։

Յորժամ կարդաս զբանս և ասես։  
որ լլմթեռնուս և որ լլուես։  
զե(ւ)կելի մարտիրոս գրիւս յիշես։  
եւ ողորմի գու ինձ ասես։

\* \*

Այս ոտանաւորը յայտնապէս երկու մասիցն է բաղկացած, մի մասը, որ վերաբերում է գանձերն երգելուն և աւարտուումէ վեցերորդ տնովը երեխ պատկանումէ Կարապետ վարդապետին, իսկ վերջին մասը, որ վերաբերումէ գանձարանի գրքի գործածութեան, հեղինակութիւն է Մարտիրոս գրչի, Երևի Պուկաս արելզան այս մասը իւր օրինակում իրրե շարունակութիւն է գտել Կարապետ վարդապետի ոտանաւորի ու նրա անուան տակ էլ արտագրել է։

\* \*

Այս տապարանի (Ն 282) միջոցով մեր ճանաչած երգիներն են ուրեմն. 1) Յակոբ վարդապետ (եպիսկոպոս ևս կոչուած է իւր տողերի մէջ) Նետտարենց,

2) Առաքել վարդապետ Բաղիշեցի.

3) Նաղաշ կամ Նախաշ:


4) Կարապետ վարդապետ Բաղիշեցի:

5) Գրիգոր վարդապետ Ծերենց:

Այս երգիներն ամէնքն էլ եկեղեցականներ են և պատկանում են մի շրջանի (Ժե— (ԺԶ գարու), նրանց երգերի նիւթն ու արտաքին ձեւն իսկ նոյնն է։ Սոքա հաւասարապէս զուրկ են բանաստեղծական աւիւնից և արուեստից, թերես բացառութիւն կաղ-

մէ միայն Նալպաշը: Եթէ միջնադարեան հայ երգիչների և տաղաջափների խմբի պարագը-  
լուն համարենք Ներսէս Շնորհալուն մի.  
դարում և վերջին ներկայացուցիչ դնենք  
Պետրոս վ. Ղափանցուն՝ մի: Դարում պի  
տի խոստովանենք, որ հայ երգիչների պա-  
րի այս երկու ծայրերի ներկայացուցիչներն  
արդարեւ բանաստեղծներ են, մինչ միջին  
անդամներից մեծ մասը տաղաջափ—բարո-  
յախօս քարոզիչներ են:

### Ե. Քարամեան:



## ԲԱՆԱՍՏԵԼՈՒՄԿԱՅՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՅՆ

ՆՈՐ—ՆԱԽԾԵԽԱՆԻ

ԱԽՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՆՑԵԱԼ.՝

( Նարումակութիւն ).

7.

**Ա. Կ. Կաթողիկոսը քաղաքային խորհրդա-  
րանի վերօյիշեալ որոշումներից անշուշտ իրաւունք  
ունէր գոհ ըլ լինելու, քանի որ քաղաքը 1871  
թուականի համախօսականով իւր վերայ առած պայ-  
մանները չեր կատարում և, առանց իւր կողմից որև-  
է զօհողութիւն անելու, այնպիսի մեծ իրաւունքներ  
էր պահանջում և, որ գլխաւորն է, կարգադրութիւն  
էր անում իւրեան չպատկանած եկեղեցական—վի-  
ճակային եկամուտների և անշարժ կալուածքի վե-  
րաբրութեամբ, Սակայն Ա. Կ. Կաթ. ամենաին  
գժկամակութիւն ցոյց չտուեց, այլ ընդհակառակը  
ստանալով քաղաքագլխի պաշտօնական յայտարա-  
րութիւնը Յանձնաժողովի գեկուցագրի պատճենի  
հետ միասին, ընդունեց նոցա առաջարկութիւ-  
նը և օրհնեց նոցա ձեռնարկութիւնը, որով մէկ  
անգամ ևս ապացոյց տուեց Ս. Էջմիածնի գէպի  
իւր հօգեսոր զաւակները ունեցած հայրական յա-  
րաբերութեամբ, Նա միայն առ ժամանակ աւելորդ  
համարեց պատուամեծար հոգարաձուի պաշտօն  
հաստատելը և աւելացրեց, որ քաղաքը աշխատէ**

4. Ղափանցու երգերի հաստարակութիւնը կարողա-  
ցանց գտնել, համեմատութիւնը հաստատեց մեր ննթագրա-  
ծը, որ Արարատ կ մէջ մեր նկարագրած ննուազիքը ար-  
տագրութիւն է այս հատարակութիւնից:

Նիւթական միջոցները ներելուն պէս չորս գասարան ը-  
լիակատար ժառանգաւորաց գոզրանոցի վերածել,  
«Յուսուն» և անշուշտ են, ով է յառաջիւոյն ընտրութիւն  
ու անշուշտ միջոցներն առաջարար իւրաքանչ համա-  
յալ էնուկան նշանակութեան և դադարիւաց և նույսութեաց  
մէջց: Առաջին հոգարաձու ընտրուեցան խորհր-  
դարանի իրաւասուներից՝ Յ. Խովնեան, Խ. Ա. Շահումյան,  
և Սույնանանասեան, Տէր-Խուլառուր Զ. Շիքինեան և գ. Տէ-  
րուեան, որոնց Կաթողիկոսը հաստատելով, երկու  
պիտառը պարտականութիւն զրեց նոցա վերայ,  
«Կամ»՝ յամենացնէ համահամ լինել է իւրաքանչուր և է բարո-  
ցեր ընդ ուղարկութեան և վերցից լինել հայութեան և է իւրա-  
քայից ուղարկութեան, և երբեք իւրի տալիւն բուրու-  
թիւնը և բործութեան վերցու անիւր է իւրաքանչուր յա-  
րաբերութեամբ շերջու: Առաջին հոգարաձու-  
թիւնը շատ գործ ունէր անելու նորա վերայ պար-  
տականութիւն էր գրած և կառավարել պարտական միջնե-  
րին, այլ և բոլոր թեմի ձիշգ է, գորոցը սկզբում  
պէտք է կազմուած լինէր միայն չորս գասարանից,  
բայց ապագայում նա պէտք է լիակատար ժա-  
ռանգաւորաց թեմական գարանոցի վերածուէր, ու-  
րեմն կարևոր էր, որ այդ գորոցի հիմքը հաստատուն  
շինուէր, որ նա կարողանար գիմնալ ամեն տեսակ  
պատահարի, նա սկզբնապատճառ պէտք է լինէր  
մի հաստատութեան, որ փոքրից սկսելով կամաց-  
կամաց պիտի մեծանար և բոլոր թեմի թէ ազգա-  
յին և թէ կրօնական տեսակետից յցան ու ապա-  
ւէնը լինէր, Գործը շատ պատասխանատու էր, իւր  
նպատակներին հասնելու համար հոգարաձութիւնը  
շատ գժուարութիւնների պէտք է յաղթէր, շատ  
նեղութիւն պէտք է քաշէր, շատ արգելքների  
պէտք է պատահէր, Գժուարութիւններից առաջի-  
նը և գլխաւորը գորոցի նիւթական միջոցների կա-  
նոնաւորելու և նոր նիւթական միջոցներ գտնելու  
խնդիրն էր, որովհետեւ եղած միջոցները այնքան ա-  
նորոշ այնքան անհաստատ էին, որ անկարելի էր,  
առանց դրանց կանոնաւորելու, ձեռնարկել գորոցի  
բացման, Բացուելիք գորոցից չորս գասարանի  
համար քաղաքային խորհրդարանից մշակուած և  
կաթողիկոսից հաստատուած շրուտը հարկաւոր էր  
ութ հազար ուուրլի, որ պիտի գոյանար զանազան  
եկեղեցական հասցեներից հետևեալ կաթողիկո-  
սահաստատ ցուցակով

Հոգարաձութիւնը ընտրուում էր երկամեայ ժամա-  
նակով: Հոգարագրական ժողովներին առհասարակ նախա-  
գահում էր Արարագագրութիւնը ( ինչն):